դ) Հայ երաժշտութեան երեկոյ

Արդէն աւանդոյթ է դարձել տարին մէկ անգամ կազմակերպել հայ երաժշտութեան երեկոյ՝ նուիրուած հայ մեծանուն երաժիշտներին: Ինչպէս գիտէք, կազմակերպուել են մեծն Կոմիտասին, Արամ Խաչատուրեանին նուիրուած երեկոներ, ինչպէս նաեւ համերգներ՝ նուիրուած մեր մեծերին:

Այս համերգների կազմակերպման գլխաւոր նպատակն է ուսանողի մօտ զարգացնել հայ ոգին եւ հնարաւորութիւն տալ մօտիկից ծանօթանալու հայ հեղինակների կեանքին եւ ստեղծագործութեան:

3. Այլ միջոցառումներ

Աւանդոյթի համաձայն Ծնողական յանձնախմբի միջոցով ամէն տարի կազմակերպւում են գործունէութիւններ, ինչպէս օրինակ՝

ա. Նոր տարուայ եւ Ս. ծննդեան օրուայ խրախճանք
բ. Մայրերի օրուայ հանդիսութիւն

Տարուայ ընթացքում այս եւ յատուկ այլ միջոցառումների մասին ձեզ կը ծանուցուեն յատուկ բացիկներով:

Ծնողները կարող են օժանդակել յանձնախմբային աշխատանքներին: Նրանք ովքեր, որոնք ցանկութիւն ունեն ինչ որ ձեւով իրենց մասնակցութիւնը բերելու երաժշտանոցի ծնողական յանձնախմբի աշխատանքներում, խնդրւում է յայտնել Լարքի գրասենեակ:

4. Կարգապահութիւն

ա. Ուշացում, բացակայութիւն: Անհրաժեշտ է դասերին ներկայ լինել ճիշդ ժամանակին: Ուշացումներ եւ բացակայութիւններ կ'ընդունուեն միայն յարգելի պատճառներով:

բ. Բացակայութիւնների դէպքում նախօրօք պէտք է զանգահարել գրասենեակ, որպէսզի աշխատակցուհին ժամանակ ունենայ այդ մասին դասատուին տեղեակ պահել: Հակառակ պարագայում բաց թողնուած դասը չի լրացուում:

գ. Որեւէ պատճառով դասերը ընդհատելու որոշումները պէտք է հաղորդուեն երաժշտանոցի տնօրէնութեան:

դ. Լարքի տնօրէնութիւնը հնարաւորին չափով փորձում է հետեւել երեխաների ապահով կեցութեանը: Այնուամենայնիւ, յաւելեալ զգուշութեան համար, յատկապէս փոքր տարիքի ուսանողների ծնողներից խնդրւում է դասերի աւարտից յետոյ լինել իրենց երեխաների կողքին կամ օգնել դասաժամերի միջեւ եղած ազատ ժամերի հսկողութեանը:

ե. Ուսանողների ամսավճարը մուծուելու է կանխիկ՝ կիսամեակային դրոյթով (Ա կիսամեակ՝ Օգոստոսից Դեկտեմբեր, Բ կիսամեակ՝ Յունուարից Մայիս): Հնարաւոր է նաեւ ամսական կատարել վճարումները՝ իւրաքանչիւր ամսուայ 1-ից 5-ի միջեւ ընկած ժամանակահատուածում: Խնդրում ենք յարգել նշուած ժամկէտը:

զ. Մաքրութեան պահպանում: Խնդրւում է իւրաքանչիւր ուսանողից անհատապէս հետեւել դասարանների եւ միջանցքների մաքրութեանը: